ամէն ցաւի կորայ կու գրէ ի վերայ մահճին,
թէ զի՛նչ կերակուր տացեն։ Եւ ամէն շաբաթ
տալաքն կու լվանայ, կ՝ածիլէ եւ պէտ կ՝առնէ։ 210
Եւ յորժամ ողջանայ՝ հանեն ի նմանէ զայն
ղգեստն, տան նմա զի՛րն եւ ասեն. Անմեղա-
գիր լեր, եղբայր, քեզ աւելի հարկիք պիտէր,
երթ խաղաղութեամբ եւ յիշեա զմեզ յաղօթս
քո։ Այսչափ սէր, գութ եւ բարերարութիւն 215
կ՝առնեն, զեռ կ՝ասեն. մի՛ մեղադրեր։

ՍԱՆԹԱ ԹՐԻՆԻԴԱ

Եւ կայր եկեղեցի մի այլ ուխտաւորաց՝
Սանթայ Թրինիդայ, մեծ եւ փառաւոր, զի
որչափ հիւր եւ ուխտաւորք գան, անդ երեք
օր պիտի հաց ուտեն։ Եւ ունի երկայն սե- 220
ղանատեղ մի, Ուղուն չարշուի նման, ուր
հազար, երկու հազար մարդ կու նստի. ապա
ամէն զատկի հինգ, վեց հազար հոգի անդ
կերակրի. եւ չկայ եկեղեցի կամ վանք, որ
ամէն օր հաց չի եւանէ։ 225

ՌԱԲՈՒՑԻՆՔ

Ամէն վանք երեքհարիւր, հինգհարիւր,
ութհարիւր հաբեղայ կայ։ Ապա ազգ մի հա-
բեղայք կան ի մէջ նոցա՝ քան զամենայնն
առաւել խստակրօն, աստուածահաճոյ, սուրբ
եւ առաքինի. նոքա բնաւ չունին վանս ի քա- 5
ղաքի, այլ ի դուրս, բոկոտն եւ հոլանի ա-
ռանց չապկի, չալ միայն ունելով, չուան

212 ողեստն։